

ՌՈՒՄԻԱՆ ՔԻԵՒԻ ՄԷՁ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿԵՐՐՈՆ ՄԸ ՀԱՐՈՒԱԾԱԾ Է

Ռուսական անօդաչու թռչող սարք մը Քիեւի մէջ երեկ կէսօրին հարուածած է առեւտրական կեդրոն մը, այդ պատճառով ալ առնուազն չորս մարդ սպաննուած է, վիրաւորուած են առնուազն եօթը մարդիկ, կը յայտնէ «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանի ռուսական ծառայութիւնը:

Քիեւի քաղաքապետ Վիթալի Զլիչքօ յայտնած է, որ հարուածը հասցունած է Սոլոմեանսքի շրջանի գրասենեկային շէնքին մօտ գտնուող կայանատեղիին: Զրդեհուած են մեքենաներ եւ շէնքը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՈՐՊԷՍԶԻ ՎԵՐԱՊԵՏԱԿԱՆԱՆԱՆ ՀԱՅ ԴԱՏԻ ՕՐԱԿԱՐԳԵՐԸ

(ՀԱՅ ԴԱՏԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայ դատի համակարգի համահայկական խորհրդածողովի բացման նիստին հնչած յայտարարութիւնները կը կեդրոնականին ներքին մարտահրաւերին՝ գործող իշխանութիւններու կողմէ Հայ դատ հասկացողութեան դէմ բացուած համազարկին վրայ: Իրաւամբ, հաստատելու համար այն, որ ոչ միայն ներքին առումով պայքարելու հրամայականը կը շեշտուի այս կերպով, այլ նաեւ՝ արտաքին ճակատի վրայ բազմապատկելու աշխատանքները՝ իշխանութիւններու թողած մեծ բացը լրացնելու միտումով:

Այս խնդիրը սակայն ունի իր պատմականը: Պետք է արձանագրել, որ Հայ դատ հասկացողութեան դէմ Հայաստանի առաջին իշխանութիւնները արդէն հրապարակային բացասական դիրքորոշում որդեգրեցին:

Ակունքները այս բոլորին կանգնած են Հայաստանի վերակախացման առաջին օրերուն պետութեան ղեկին յայտնուած ուժին մօտ, որ՝ ա.- Տեղասպանութեան միջազգային ճանաչումը դուրս բերաւ Երեւանի արտաքին քաղաքականութեան օրակարգէն,

բ.- Սփիւռքին ուզեց վերապահել միայն Հայաստանի արտաքին քաղաքականութեան գօրակցելու գործառնող,

գ.- Արցախի լուծման համար առաջադրեց ժեւեղնովոտսքիական լուծում կամ խաղաղութիւն, թէ՛ պատերազմ. լրջանալու պահի ընտրութիւն,

դ. Ազգային գաղափարախօսութիւնը համարեց քաղաքական կեղծ քաթելորիա,

ե. Հայրենիք հասկացողութիւնը պարզաբանեց այսօրուան Հայաստանի Հանրապետութեան սահմաններով միայն:

«Հայդատականութիւն», «նարինջ ուտողներ», «առաւելապաշտութիւն» ձեակերպումները կը պատկանին առաջին իշխանութիւններու բառապաշարին եւ անոնց կողմէ արտայայտուած միտքերուն:

Այսօր այս գաղափարախօսութիւնն է, որ աւելի կոշտ ըսեալ՝ ըսեալ էր, աւելի հակապետական դրսեւորումներով, սահմանադրութեան խախտումներով կը կիրարկուի: Գաղափարախօսութիւնը նոյնն է:

Արդարութեան համար սակայն պետք է արձանագրել, որ առաջին իշխանութիւններուն օրով էր, որ թե՛ բանավեճեր եւ քննարկումներ տեղ մշակուեցաւ: Անկախութեան հռչակագիրը, որ ստացաւ նաեւ սահմանադրական իրաւականութիւն:

Այս գաղափարախօսութիւնը տապալեցաւ, երբ զիջումներու սահմանը հատուեցաւ եւ իշխանափոխութեամբ՝

ա.- Տեղասպանութեան միջազգային ճանաչումը վերադարձաւ պետական օրակարգ,

բ.- Արցախի ինքնորոշման իրաւունքը ընդունեցաւ հիմք՝ բանակցային գործընթացի,

գ.- Սփիւռքահայութեան տրուեցաւ հնարաւորութիւն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի դառնալու,

դ.- Ընդունուեցաւ Համահայկական հռչակագիր, ուր նշում կար Սեւրի պայմանագիրին ու իրաւարար վճիռին այժմեական նշանակութեան:

Հայ դատի դաւանած արժեհամակարգն ու առաջադրանքները կը վերադառնային պետական քաղաքականութիւն:

Այս խնդիրներուն պատմականի իշեցումը կը նպատակադրէ ոչ անպայման այս գաղափարախօսութեան ակունքներուն կանգնած ուժերը մատնացոյց ընել, որքան հետեւցնել, որ այս օրակարգերը անպայման կը վերապետականանան: Հիմնականը սակայն ժողովուրդին մօտ այդ առաջադրանքներուն եւ արժեքներուն պահպանման համար դժուար, սակայն հետեւողական աշխատանքը անվիհատ շարունակելն է: Չարտօնելը, որ ժողովրդափոխութիւն տեղի ունեայ հայրենիքին մէջ, ինչ որ շատ աւելի խորքային խնդիր է, քան իշխանափոխութիւնը:

Ժողովուրդին անունով այսօր այս գաղափարախօսութիւնը յառաջ տանողները կը գիտակցին, որ նախկին հակահայրատ աշխատանքը տապալած է: Պետք է գիտակցին նաեւ, որ այս մէկն ալ կը տապալի, եւ Հայ դատի օրակարգերը վերստին կը պետականանան:

Սահմանադրութեան փոփոխութեան մերժումը համաժողովրդային հանրաքուէով ինքնաբերաբար կ'առաջնորդէ Հայ դատի առաջադրած օրակարգերու վերապետականացման, որուն համար հրամայական է ժողովուրդին մօտ համախմբուած եւ անդադրում աշխատիլը:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՔԻԵՒԻՆ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ Է ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ ԵՌԱԿՈՂՄ ԹԵՔՆԻԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼ



Միացեալ Նահանգներ Ռուսիոյ եւ Ուքրանիոյ առաջարկած են թեքնիք ձեւաչափով եռակողմ հանդիպում կայացնել Արաքական Միացեալ Էմիրութիւններուն մէջ, հաղորդած է Վոլոտիմիր Չելենսքի: Այժմ, ըստ Ուքրանիոյ Նախագահին, Կիեւ ամերիկեան կողմէն առաջարկներ կը սպասէ ժամկետին վերաբերեալ:

Չելենսքի յայտնած է նաեւ, որ Նիւ Եորքի մէջ Միացեալ Նահանգներու Նախագահ Տանքլտ Թրամփի հետ իր հանդիպումէն ետք, ուքրանական եւ ամերիկեան բանակցային խումբերը պայմանաւորուած են խորհրդակցութիւններ կայացնել Պրիւքտելի եւ Մոսկուայի հետ, ապա վերադառնալ բանակցութիւններուն:

«Պայմանաւորաւծութիւնը այսպիսին է. մենք կը տեղեկացնենք եւ այդ մանրամասնութիւնները կը քննարկենք եւրոպական կողմին հետ: Ամերիկացիները կը խօսին ռուսներուն հետ, եւ տասը օրէն մենք կը վերադառնանք այս կամ այն կարծիքով ու արդիւնքով», ըսած է Ուքրանիոյ Նախագահը:

Շար.ը՝ Էջ 8

ԱՐԱՂՉԻ «ԻՐԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ Է ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ, ՈՐ ԹՈՅԼ ԿՈՒ ՏԱՅ 7 ՕՐՈՒՄՆ ՄԷՁ ՎԵՐԱՔԱՆԱԼ ՀՈՐՄՈՒԶԸ»



Թեհրան Ուաշինկթընի ներկայացուցած է Նոր առաջարկ մը, որը կարեւորութիւն կու տայ Հորմուզի նեղուցը վերաբանալու 7 օրուան մէջ եւ վերսկսիլ հակամարտութեան կարգաւորման ուղղուած բանակցութիւնները, Նիւ Եորքի մէջ յայտնած է Իրանի արտաքին գործոց նախարար Ապպաս Մրադչին, կը տեղեկացնէ «Ֆայնէշը Թայմզ»-ը:

«Մենք միջնորդներու միջոցով Միացեալ Նահանգներուն ներկայացուցած ենք ծրագիր մը, որ թե՛ որոշակի պայմաններ բաւարարուին... Նեղուցը կը բացուի 7 օրէն», ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի շրջանակին մէջ ըսած է ան՝ աւելցնելով, որ անկէ յետոյ Իրանն ու Միացեալ Նահանգները պիտի վերսկսին բանակցութիւնները վերջնական համաձայնագիրին համար:

Ըստ Թեհրանի, Նոր առաջարկը հիմնուած է յունիսի Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ կնքուած փոխըմբռնման յուշագիրին վրայ: Այդ համաձայնագիրը 60 օրով կ'ներկարածէր ապրիլեան հրադադարը, որուն ընթացքին Միացեալ Նահանգները պետք է արտօնութիւններ տրամադրէին իրանական նաւթի արտահանման համար, եւ Հորմուզի նեղուցով նաւաւազութիւնը պէտք է աստիճանաբար վերադառնար Նախապատերազմեան մակարդակին, մինչ երկու հակառակորդները կը բանակցէին երկարատեւ կարգաւորման պայմաններու շուրջ:

ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՒ ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵՒ ԳՐԱՄԵՆԵԱԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ



25 սեպտեմբերին, կէսօրուան ժամը 12:00-ին, «Էլիթ փազա» կեդրոնի «Մանթաշով» դահլիճին մէջ տեղի ունեցաւ ՀՀԴ Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու համահայկական խորհրդածողովի պաշտօնական բացումը:

25-28 սեպտեմբեր երկարող այս ժողովը կազմակերպուած է ՀՀԴ Բիւրոյին կողմէ, անոր կը մասնակցին շուրջ քսան երկիրներէ Հայ դատի յանձնախումբերու ու գրասենեակներու պատասխանատուներ, ինչպէս նաեւ ՀՀԴ կուսակցական մարմիններու ներկայացուցիչներ:

Բացման պաշտօնական արարողութեան արտասանած իր խօսքին մէջ ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Արմեն Ռուստամեան դիտել տուաւ, որ Հայաստանի եւ Արցախի դէմ վերջին շըրջանին Ազդեցիկ սանձագերծած պատերազմական գործողութիւնները:



Սն յայտնեց, որ այսօր հայութեան եւ Հայ դատի կառոյցներուն առաջնահերթ խնդիրներն են՝ պահպանել հայկական ինքնութիւնը, հայոց պետականութիւնն ու ինքնիշխանութիւնը, տէր կանգնիլ հայ ժողովուրդին ու անոր սերունդներու անժամանցելի իրաւունքներուն եւ կանխել Հայաստանի թրջացումը:

«Այսօր Հայ դատի խնդիրներու հետապնդման համար տարուող պայքարը արտաքին խոչընդոտներէն զատ, դժբախտաբար, ձեռք կը բերէ նորայայտ ներքին ճակատ», դիտել տուաւ Ռուստամեան՝ շեշտելով, որ այս փուլին Հայ դատի մեր ամբողջ կառոյցին պատմական առաքելութիւնն է կտրել ազգակործան այս զիջումներու շղթան՝ յանուն մեր հաւաքական լինելիութեան: Ան հաստատեց, որ Հայնակցութեան համար իրական ինքնութեան բաղադրիչներն են՝ մեր ընդհանուր հայրենիքը, մեր մայրենի լեզուն, մեր սերունդներու ժառանգութիւնն ու մշակոյթը եւ մեր

սուրբ կրօնն ու հաւատամքը:

Իր խօսքի եզրափակիչ մասով ան շեշտեց, որ այսօր հայ ժողովուրդը



կանգնած է ճակատագրական ջրբաժանի առջեւ՝ կա՛մ ձեւաւորել ազգային իշխանութիւններ, փոխել երկրի այս հակազգային ուղեգիծը եւ Հայաստանը ըլլալ իրական հայկական, կա՛մ ձգել, որ այս ընթացքով Հայաստանի թրջացումը դառնայ իրական՝ աւելցնելով. «Մենք այստեղ ենք նպաստելու, որ մեր ժողովուրդը ճիշդ կողմնորոշուի եւ ընտրէ ազգայինը պահպանելու ուղղութիւնը»:

ՀՀԴ Հայ դատի Կեդրոնական խորհրդի նախագահ Յակոբ Տեր Խաչատուրեան՝ իր խօսքին մէջ ըսաւ, որ խորհրդածողովին մասնակցներն ու Հայ դատի կառոյցներուն մէջ գործողները կը մաքառին արտաքին աշխարհի քաղաքական, դիւանագիտական եւ միջազգային ազդեցիկ կազմակերպու-

թիւններու հարթակներուն վրայ հայութեան ու պետութեան շահերը պաշտպանելով եւ զանոնք յառաջ տանելով բոլոր մակարդակներով:

Ան դիտել տուաւ, որ այդ աշխատանքները ունին հիմնական չորս ուղղութիւն՝ Հայաստան եւ Արցախ, Տեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի խթանում՝ մինչեւ թուրքիոյ պաշտօնական ճանաչումը եւ անժամանցելի իրաւունքներու հատուցում եւ վերականգնում, հայրենիքէն դուրս աշխարհատարած հայ ժողովուրդի սահմանադրական, իրաւական, դաշնագրային, քաղաքական եւ համայնքային կամ փոքրամասնական իրաւունքներու պահպանում եւ ընդլայնում, սփիւռքի մէջ հայութեան՝ առհասարակ, եւ երիտասարդութեան՝ ի մասնաւորի, քաղաքականացում ու տարբեր երկիրներու մէջ քաղաքական կեանքի լիիրաւ մասնակցութիւն:

Տեր Խաչատուրեան շեշտեց, որ



Շար.ը՝ Էջ 8

ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԼԱՄ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՓԱՔԻՍՏԱՆԻ ԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԻՑԻՆ ՀԵՏ



ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի քուլիսային հանդիպումներուն ծիրին մէջ վարչապետ Նաուաֆ Սալամ երէկ հանդիպում մը ունեցաւ Փաքիստանի իր պաշտօնակիցին՝ Սոհաբ Շահապազ Շերիֆի հետ:

Խօսակցութեանց առանցքը կազմեցին շրջանին մէջ շարունակուող իրանեամերիկեան հակամարտութիւնն ու իսրայելեան յարձակումները Լիբանանի, յատկապէս՝ հարաւային շրջաններուն ուղղութեամբ:

Այս առիթով վարչապետ Սալամ անհրաժեշտ նկատեց Իսրայէլի դէմ ճնշումներու բանեցման շարունակութիւնը՝ ապահովելու համար անոր ուժերուն հեռացումը լիբանանեան գրաւեալ տարածքներէն:

ՍԱԼԱՄ-ՄԱՏՊՈՒԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Վարչապետ Նաուաֆ Սալամ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի նիստերուն զուգահեռ երէկ շարունակեց իր քուլիսային հանդիպումները շրջանային թէ միջազգային զանազան երկիրներու ղեկավարներուն հետ:

Այս ծիրին մէջ Սալամ տեսակցեցաւ նաեւ Եգիպտոսի իր պաշտօնակիցին՝ Մուսթաֆա Մատպուլիի հետ: Անոնք միասնաբար պարզեցին շրջանի ու յատկապէս Լիբանանի ապահովական նորագոյն իրադարձութիւնները:

Այս առիթով հարաւային Լիբանանի ուղղութեամբ շարունակուող իսրայելեան յարձակումները յատուկ կարեւորութեամբ նշուեցան՝ ընդգծելով յարձակումներու կասեցումը, իսրայելեան ուժերու անյապաղ հեռացումը հարաւային Լիբանանի գրաւեալ տարածքներէն եւ կայունութեան ամրապնդումը:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Նելլի Վարդեան Կարպուշեան
Տիար Վարազ Կարպուշեան
Տիկին Անթուանթ Վարդեան
Տէր եւ տիկին Լեօ եւ Ժումնա Կարպուշեան
եւ զաւակունք (Լիբանան)
Տիկին Ռուզբէ Սարգիսեան եւ զաւակունք (Լիբանան)
Տէր եւ տիկին Ծերուն եւ Զոհապին Կարպուշեան
եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վաչէ եւ Մարո Բարունակեան
եւ զաւակունք (Քանաւա)
Տէր եւ տիկին Ռազմիկ եւ Թալին Կիրիւնեան
եւ զաւակունք (Լիբանան)
Տէր եւ տիկին Յակոբ եւ Սարին Վարդեան
եւ զաւակունք (Լիբանան)
Կարպուշեան եւ Վարդեան ընտանիքներ
Սարգիսեան եւ Բարունակեան ընտանիքներ
Կիրիւնեան եւ Ֆարաի ընտանիքներ
Կետիկեան եւ Պետրոսեան ընտանիքներ
Արմուճեան եւ Պուզպուրի ընտանիքներ
Սաղըր եւ Խուրի ընտանիքներ
Յովհաննեսեան եւ Ընթլանեան ընտանիքներ
եւ համայն ազգականներ կը գումեն իրենց հարազատին՝

ԵՂԻԱ ԿԱՐՊՈՒՇԵԱՆԻ (Ծնեալ՝ Լիբանան, 1965-ին)

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 23 սեպտեմբեր 2026-ին, Երեւանի մէջ, Հայաստան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ շաբաթ, 26 սեպտեմբեր 2026-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Մալաթիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Երեւան-Հայաստան:

•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:

«ԱԶԴԱԿ»Ի ԱՐԱՔԵՐԷՆ
ԿԱՅՔԷԶԸ
www.aztagarabic.com

ՍԱԼԱՄ. «ՈՉ ՈՔ ԲԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԿՐՆԱՅ ԽՕՍԻԼ ԿԱՄ ԲԱՆԱԿՑԻԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ»

«Ոչ ոք կրնայ խօսիլ կամ բանակցիլ Լիբանանի անունով, բացի իր կառավարութենէն եւ անոր սահմանադրական կառոյցներէն», յայտարարեց վարչապետ Նաուաֆ Սալամ երէկ ՄԱԿ-ի հարթակէն արտասանած իր խօսքին մէջ:

ՄԱԿ-ի 81-րդ Ընդհանուր ժողովին Լիբանանի խօսքը արտասանելով վարչապետ Սալամ հիմնական երեք կէտերու մէջ ամփոփեց իր կեցումածը: Արդարեւ, Լիբանանի գերիշխանութեան ամրապնդման, իսրայելեան ուժերու հեռացման, տեղահանութեան տունդարձին եւ վերակառուցման կողքին Սալամ ընդգծեց ՄԱԿ-ի կողմէ տրուած որոշումներու գործադրութիւնը արդար կերպով:

Ան նաեւ շեշտեց վստահութեան ներշնչումը եւ անոր կիրարկման կարեւորութիւնը բոլորին՝ անհատին եւ հաւաքականութեան բարօրութեան համար հաւասարապէս, իբրեւ երաշխիք ամենուրեք արդարութեան ամրապնդման:

Երրորդ կէտով Սալամ յիշեցուց 1949-ին Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ հաստատուած զինադադարը՝ մերժելով, որ Լիբանան փորձադաշտ դառնայ այլ կողմերու միջեւ հակամարտու-



թեանց : Սալամ նաեւ մերժեց պատերազմի շարունակութիւնը շրջանին մէջ՝ նշելով, որ Լիբանանը գերծ պետք է պահել շրջանային պատերազմներու հետեւանքներէն:

Ան նաեւ պահանջեց ՄԱԿ-ի թիւ 1701 որոշումի ամբողջական գործադրութիւնը՝ շեշտելով, որ Լիբանանի մէջ ապահովական կայունութեան ամրապնդման գլխաւոր երաշխիքը անոր բանակին գերիշխանութիւնն է՝ յիշեցնելով, որ երկրի պաշտպանութեան զենքը պետք է մնայ միայն բանակի հսկողութեան տակ:

Այս առիթով Սալամ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, յատկապէս՝ Միացեալ Նահանգներուն, որոնք ճիգ չխնայեցին կասեցնելու Լիբանանի վրայ յարձակումները եւ Լիբանանի ու Իսրայէլի միջեւ բանակցութեան կարելիութիւնը հարթեցին:

ՌԱԺԺԻ. «ՄԵՆՔ ՄԵՐ ՁԵՌՔԵՐԸ Կ'ԵՐԿԱՐԵՆՔ ՈՐԵՒԷ ԿՈՂՄԻ»

«Մենք մեր կեցումածը արտայայտեցինք մէկնելով մեր քաղաքական կեցւածքէն», յայտարարեց արտաքին գործոց նախարար Եուսէֆ Ռաժժի, նախանշելով օր վարչապետ Նաուաֆ Սալամի եւ Իրանի նախագահ Մետուս Փեզեքիանի միջեւ Իրանի արտաքին գործոց նախարար Ապաս Արաղչիի ներկայութեան կայացած հանդիպումէն ետք:

Լրագրողներու հարցումներուն պատասխանելով՝ նախարար Ռաժժի երկխօսութեան պատրաստակամութիւն յայտնեց առնչակից բոլոր կողմերուն հետ՝ նշելով, որ ոչ մէկ արգելք կայ ձեռք երկարելու որեւէ կողմի: «Մենք մեր ձեռքերը կ'երկարենք որեւէ կողմի», ընդգծեց նախարար Ռաժժի:



ՀԱԺ ՀԱՍԱՆ. «ԿԸ ԴԻՍԱԿԱԼԵՆՔ ԵՐԶԱՆԻՆ ՄԷՋ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՈՂ ՀՍԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ»



«Շրջանին մէջ կը կատարուին հսկայական փոփոխութիւններ, եւ մենք կը դիմակայենք շրջանին մէջ ամերիկեան գերակայութիւնը», յայտարարեց Պապկէ-Յերմէլ շրջանի խորհրդարանական պլոքի նախագահ, Հատարմութիւն դիմադրութեան պլոքի անդամ Երեսփոխան Յիւսէյն Հաժ Հասան:

Ան վերահաստատեց Հրգպալլայի կեցումածը՝ տէր կանգնելու հարաւային Լիբանանի հայրենակիցներուն եւ հոգալու անոնց կարիքները, ինչպէս նաեւ երաշխաւորելու անոնց ապահով տունդարձը: Հաժ Հասան քննադատեց այն կողմերը, որոնք իրենց յոյսը դրած են ամերիկեան օժանդակութեան վրայ՝ նշելով, որ նման քայլ մը մեծ սխալ է:

Ան նաեւ հարց տրուաւ, որ լիբանանեան պետութիւնը ի՞նչ ըրած է հարաւային Լիբանանի պաշտպանութեան համար զոհուած նահատակներու ծնողներուն, ինչո՞ք ցարդ չէ նորոգած աւերուած գիւղերը եւ ինչո՞ւ յաւելեալ ճնշում չի բանեցնէր առնչակից կողմերուն մօտ՝ ապահովելու համար իսրայելեան ուժերու հեռացումը գրաւեալ շրջաններէն:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԷ ԲԱՐԶՐ ԳՆԱՀԱՏԵՑ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՒ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ



«Ո՛վ կամաւորներ, դուք չէք գիտեր, թէ վիրաւորը ի՞նչ կը զգայ, երբ դուք կը հասնիք իր մօտ», յայտարարեց նախագահ Ժոզէֆ Առն երէկ Միջին Արեւելքի եւ հիւսիսային Աֆրիկէի մէջ Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի 12-րդ համագումարին առիթով արտասանած իր խօսքին մէջ:

Նախագահ Առն խիստ բարձր գնահատեց այս գոյգ կամաւորական կազմակերպութիւններուն գործունեութիւնը: Առն նշեց, որ այդ տղաքը շուտափոյթ եւ անշահախնդիր արկածախնդրութեամբ օգնութեան հասան կարօտեալին, վիրաւորին, մահաւորին, առանց որեւէ հարցականի ենթակայի ինքնութեան թէ այս կամ այն պատկանելիութեան մասին:

Հանրապետութեան նախագահը վկայակոչեց յատկապէս ապահովական ահաւոր պայմաններուն եւ Զորանայի համավարակի օրերուն մարդոց օգնութեան հասնելու փութեցող կամաւորներու յանձնառութիւնը, անոնք յաճախ իրենց անձը վտանգեցին՝ փրկելու համար զիրենց սպասող վիրաւորը: Նախագահ Առն այս գծով թուեց կարգ մը նահատակներու եւ վիրաւորներու անուններ, որոնք զոհ գացած էին իսրայելեան յարձակումներուն ընթացքին՝ իրենց առաքելութեան ճամբուն վրայ, ինչպէս՝ նահատակներ Եուսէֆ Ռեմուն Ասաֆ եւ Հասան Ալի Պատաւի:

Ան ողջունեց այս կազմակերպութիւններու օրինակելի եւ վարակիչ կեցումածը ու ոգին: Երբ մարդիկ սարսափով կը խուսափէին Զորանայով վարակուած հիւանդներուն մօտենալէ, այս կամաւորներն էին, որոնք խիզախ ու համարձակօրէն կը փութային վարակեալի օգնութեան: Անոնց շտապ օգնութեան ինքնաշարժին ճշակն անգամ յոյսի նշոյլ մը կը թուէր ըլլալ մահաւոր վիրաւորներուն համար:

Նախագահ Առն այս առիթով կոչ ուղղեց բոլորին զօրավիգ կանգնելու այս կամաւոր կազմակերպութիւններու նուիրեալ անդամներուն եւ դիրացնելու անոնց երթեւեկն ու գործունեութիւնը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ ԴՊՐՈՏԵՐՈՒ
ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՄՈՒՏ
2026-2027
ՀԻՆԳԵԱՔԹԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

-ԵՐԵՔԵԱՔԹԻ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2026-ԷՆ ՍԿՍԵԱԼ

-ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԼԵՒՈՆ ՇԱՆՔ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ (ՊՈՒՐԺ ՀԱՄՈՒՏ) ԵՒ «ԱՐԱԼԵԱՆ-ՀԱՐԸ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ «ԺԻՐԱՅՐ ԵՒ ՅՈՒՆԷ ԽԱՅԱՏՈՒՐԵԱՆ» ԿԵԴՐՈՆ (ՄԸԶԸՐԻ)

-ԵՐԿՈՒՇԱՔԹԻԷՆ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԸ՝ ԱՌԱՌՕՏԵԱՆ
ԺԱՄԸ 11:30-2:00 ԵՒ ԿԷՍՕՐԷ ԵՏՔ ԺԱՄԸ 3:00-7:00, ԻՍԿ ՇԱՐԱԹ
ՕՐԵՐԸ՝ ԱՌԱՌՕՏԵԱՆ 9:00-1:00 ԵՒ ԿԷՍՕՐԷ ԵՏՔ 2:00-6:00

**«Վառայ Զայն»ի հիմնադրութեան
40-ամեակին առիթով**

**ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Մասնակցութեամբ Հայրենի երգիչներ՝

ԼԻԱՆԱ ԵՒ ԿԱՐԷՆ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐՈՒ

Շաբաթ, 17 Հոկտեմբեր 2026, Երեկոյեան ժամը 9-ԷՆ սկսեալ,
Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:

«ԱՅՍ ԺԱՊԱԻՆԻՆ ՄԷՋ ԴՐԵԼ ԵՄ ԻՄ ԱՄԲՈՂԶ ԶԳԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՍ, ԱՊՐՈՒՄՆԵՐՍ, ՅԱԻՍ ԵՒ ՅՈՅՍԱՍ»

«ԱԶԳԱԿ»-ԻՆ Կ'ԸՍԵ ԲԵՄԱԳՐԻՉ ԶԻԻԱՆ ԱԷՏՏԻՍԵԱՆ

«Վերջին դրախտը», «Թեանիկ», «Վերջին բնակիչը» ժապաւեններու բեմադրիչ Ջիւան Աւետիսեան 3 հոկտեմբերին Միացեալ Նահանգներու մէջ պիտի ներկայացնէ իր նորագոյն ժապաւենը՝ «Վերածնունաճը», որ, ինչպէս կը հաստատուի ինք, իր բոլոր միւս գործերէն աւելի ընդարձակ տարողութիւն ունի՝ թե՛ իր պատմութեամբ, թե՛ իր ընդգրկումով եւ թե՛ դերասանական կազմով:

Միջազգային մրցանակներու արժանացած Ջիւան Աւետիսեան սովորական բեմադրիչ մը չէ, պարզապէս ժապաւեն մը պատրաստելու եւ բեմադրելու միտող արուեստագէտ մը չէ, այլ սկզբունք, նպատակ եւ թիրախ ունեցող, Արցախի մէջ ապրած եւ կազմաւորուած հայորդի մըն է, որ իր մասնագիտութիւնն ու տաղանդը ծառայեցուցած է եւ կը շարունակէ ծառայեցնել հայութեան Ղատին, յատկապէս՝ Արցախին: Սակայն անոր ժապաւենները մնայուն կերպով կը միտին շրջանցել հայկական ներքին կեանքը ու հասնիլ օտար հանդիսատեսին, մեր Ղատը հասցնել միջազգային հարթակներ, արուեստի ճամբով ձայն բարձրացնել եւ արդարութիւն պահանջել: Ան կը փորձէ իր իւրաքանչիւր օրը, իր բոլոր ուժերը, կամքը ծառայեցնել այն գաղափարին, որ աշխարհին մէջ պէտք է խօսիլ մեր մասին:

Ինքնութեան փնտռողի առանցքին շուրջ ընթացող «Վերածնունաճը» ժապաւենին հերոսը կ'երթայ դէպի իր արմատները՝ Արցախ ու Չանձասար: Ժապաւենին, անոր ծննդոցին, անցած ուղիին, նպատակներուն եւ հեռանկարներուն ծանօթանալու միտումով «Ազգայն» հետեւեալ հարցազրոյցը կատարեց Ջիւան Աւետիսեանին հետ:



«ԱԶԳԱԿ».- 3 հոկտեմբերին Լոս Անճելըսի մէջ առաջին անգամ ըլլալով պիտի ցուցադրուի Ձու «Նորածին գաւաղը» (չեմ գիտեր, եթէ գայն արու կամ եզ կը փափաքիս նկատել)՝ «Վերածնունաճը» ժապաւենը: Ե՞րբ եւ ինչպէ՞ս ծնաւ նման ժապաւեն մը կեանքի կոչելու գաղափարը:

Ջիւան Աւետիսեան.- Ծաւ 6իշդ եք ձեւակերպում հարցը. իմ ժապաւեններն իսկապէս իմ գաւակներն են: «Վերածնունաճը» ժապաւենի վրայ աշխատում եմ արդէն ութ տարի եւ շուտով այն կը յանձնեմ հանրութեան դատին: Ժապաւենի անդրանիկ ցուցադրութիւնը տեղի պիտի ունենայ հոկտեմբեր 3-ին, Լոս Անճելըսում, Warner Bros. շարժապատկերի սրահին մէջ:

Այս ժապաւենն իսկապէս շատ կարեւոր է ինձ համար: Այն այս ութ տարիների ընթացքում անցել է ինձ հետ «Զորոնա»-ի, պատերազմի եւ Արցախի հայաթափման միջով: Այդ բոլոր տարիների ընթացքում կուտակուած ու ապրած փորձերն ու զգացումները, ապրումները, ցաւն ու մտորումները փորձել եմ դնել այս ժապաւենի մէջ:

«Ա.».- Ժապաւենի աշխատանքներու սկիզբէն մինչեւ անոր աւարտի տարիները ճակատագրական եղան հայութեան համար. դէպքերու եւ իրականութիւններու փոփոխութիւնը որքանով ազդեցին այս ժապաւենին վրայ:

Ջ.- Ժապաւենի բեմագրութեան վրայ մենք սկսել ենք աշխատել դեռեւս 2018 թուականին: Այդ ժամանակ պատմութեան հիմքում բառօրեայ պատերազմն էր, իսկ արհեստական բանականութիւնը դեռ չէր ներխուժել մեր առօրեայ կեանք: Ես եւ իմ աւագ ընկերը, որը արհեստական բանականութեան ճարտարագէտ է, շատ էինք խօսում այն մասին, թէ ինչպէ՞ս է այդ արհեստագիտութիւնը գալու մեր կեանք, ի՞նչ փոփոխութիւններ է բերել:



րելու եւ ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ մարդու ու հասարակութեան վրայ:

Եթէ այս բոլոր արհաւիրքները տեղի չունենային, զուցէ «Վերածնունաճը» այսօր ընկալուէր նաեւ որպէս արհեստական բանականութեան մասին մի տեսակ կանխագուշակութիւն: Բայց այդ համաշխարհային համընդհանուր ցնցումները փոխեցին նաեւ ժապաւենը եւ, բնականաբար, երկարածեցին նրա ճանապարհը դէպի մեծ պատահար:

Զառօրեայ պատերազմի փոխարէն՝ ժապաւենին պատմութեան մէջ մտաւ 2020 թուականի 44-օրեայ պատերազմը: Իսկ այն, ինչ 2018-ին մենք պատկերացնում էինք որպէս ապագայի հեռավոր գարգացում, այսօր արդէն դարձել է մեր կեանքի անբաժանելի մասը: Այդ ընթացքում աշխարհը փոխուեց, մենք փոխուեցինք, եւ այդ փոփոխութիւնները անպայման իրենց հետքն են թողել նաեւ ժապաւենի վրայ:

«Ա.».- Ուր երկար տարիներ, անկտրում եւ ժրաջան աշխատանք, հսկայական ծախս ու մարդու: Խօսի՞նք ժապաւենի անցած ուղիին մասին:



Ջ. Ա.- Ես այնքան եմ ասել, որ չեմ վախենում դժուարութիւններից, որ երբեմն թուում է՝ կեանքն ինձ անընդհատ փորձում է տեսնելու համար, թէ որքան դիմացկուն եմ: «Վերածնունաճը» այդ բոլոր խոչընդոտների իմ պատասխանն է: Եւ զուցէ հենց այդ պատճառով այն դարձել է մինչեւ այսօր իմ ամենաձախուս ժապաւենը՝ թե՛ իր պատմութեամբ, թե՛ իր ընդգրկումով, թե՛ դերասանական կազմով: Այն անցել է իմ նախորդ ժապաւենների ծաւալը:

Այս ժապաւենի մէջ ես դրել եմ՝ իմ ամբողջ զգացական աշխարհը, ապրումները, ցաւը, յոյսը եւ այն ամենը, ինչ ուզում եմ ասել աշխարհին: Ես խօսում եմ իմ՝ որպէս արցախցու, որպէս հայի, ապրածի ու զգացածի մասին:

«Ա.».- Ժապաւենին հերոսը կը մեկնի Արցախ, սակայն վերջին տարիներուն, ցաւ ի սիրտ, այդ մէկը կարելի չէ: Ժապաւենին մէջ կա՞ն բաժիններ, որոնք Արցախի մէջ նկարուած են, իսկ շարունակութեան նկարահանումը ո՞ր կարելի եղաւ կատարել՝ արցախեան հարազատութիւնը պահպանելու համար:

Ջ. Ա.- Արցախում նկարահանումներ չեմ արել, եւ դա ինձ համար շատ ցաւալի է: «Վերածնունաճը» իմ միակ ժապաւենն է, որը չկարողացայ նկարել Արցախում:

Մենք փորձեցինք հնարաւորինս վերականգնել Արցախի իրականութիւնը: Ընտրեցինք Արցախի բնութեանը եւ միջավայրին նման տեղանքներ, կառուցեցինք ներքին յարդարանքներ եւ ստեղծեցինք մի միջավայր, որը, կարծում եմ, իսկապէս շատ մօտ է արցախեան իրականութեանը: Բայց ինձ համար միայն տեղանքները չեն կարելու: Ինձ համար կարեւոր է նաեւ այն ամբողջ ստեղծագործական գործընթացը, որը կապուած էր Արցախի հետ:



Արցախում Արցախի մասին ժապաւեն նկարելը ինձ համար մի տեսակ տոն էր: Յիշում եմ, թէ որքան էին արցախցիներն օգնում ու աջակցում ինձ նկարահանումների ժամանակ, որքան հեշտ էր այնտեղ ստեղծագործելը: Այնտեղ ես ոչ միայն ժապաւեն էի նկարում, այլեւ իմ միջավայրում էի, իմ մարդկանց մէջ, իմ իրականութեան մէջ:

Այսօր այդ ամենը մեծ կարօտով եմ յիշում: Եւ, չնայած այս ժապաւենը չկարողացայ նկարել Արցախում, ես հաւատում եմ, որ այդ օրը կրկին գալու է, եւ ես նորից ժապաւեններ եմ նկարելու Արցախում:

«Ա.».- Ժապաւենի պատմութիւնը, դէպքերը որքանով իրական կեանքէ առնուած են, բնականաբար կայ պատումի բաժինը, սակայն կա՞ն որոշ պատկերներ, որոնք իսկապէս պատահած են:

Ջ. Ա.- Պատմութիւններն ու դէպքերն իրական են, այնպիսին՝ ինչպիսին ես եմ ընկալել իրականութիւնը: Նոյնիսկ Չանձասարի որոշ պատկերներ կան, որոնք ես անձամբ եմ նկարել 2020 թեւականի նոյեմբերի 8-ին:

Ես փորձում եմ անկեղծ լինել եւ հաւատարիմ մնալ ճշմարիտ պատմութիւնը ներկայացնելու իմ սկզբունքին՝ անկախ ժամանակի մարտահրաւերներից ու պահանջներից: Գիտեմ, որ այդ մօտեցումը երբեմն դժուարացնում է ժապաւենի ճանապարհը միջազգային հարթակներում, բայց ինձ համար դա աւելի կարեւոր է:

Ես պատմում եմ իրական, ճշմարտացի պատմութիւններ եւ փորձում եմ դրանք հնարաւորինս լայն լսարանի հասցնել, մինչեւ մի օր աշխարհը հասկանայ իմ ասելիքը:



«Ա.».- Զեր ժապաւենները սովորաբար միայն պատմութիւն չեն պատմեր, այլ կը մղեն հարցադրումներու, մտածումներու եւ մարդու ներաշխարհին հետ առերեսելու: Այս պարագային ի՞նչ պատգամներ կան ի՞նչ թաքնւած:

Ջ. Ա.- Ընդհանրապէս եմ, յուսամ՝ հենց այդպէս է: Ես ուզում եմ, որ իմ ժապաւենները դիտելուց յետոյ մարդու մէջ հարցեր առաջանան, որ՝ դրանք նրան մտածելու առիթ տան: Յուսամ՝ ինձ դա յաջողում է:

Ինձ համար շատ կարեւոր է, որ հանդիսատեսը ժապաւենն աւարտելուց յետոյ նոյն մարդը չմնայ եւ պարզապէս շարունակի իր օրը: Ուզում եմ, որ ժապաւենը նրա մէջ ինչ-որ բան փոխի, հարցեր առաջացնի, ստիպի մտածել, վերաիմաստաւորել եւ զուցէ նոյնիսկ որոշ բաների այլ կերպ նայել:

Եթէ ժապաւենից յետոյ մարդը շարունակում է մտածել դրա մասին, իր մէջ հարցեր է տալիս եւ փորձում է գտնել դրանց պատասխանները, ինձ համար դա արդէն ժապաւենի ամենակարեւոր արդիւնքներից մեկն է:

«Ա.».- Այս անգամուան առանձնայատկութիւններն է նաեւ արհեստական բանականութեան բաղադրիչի ներգրաւումը, ի՞նչ ձեւով եւ ինչո՞ւ եղած է առիկա:

Ջ. Ա.- Ժապաւենի հերոսը արհեստական բանականութեան ճարտարագէտ է: Նրա ստեղծած ծրագիրը հետեւում է աշխարհում տեղի ունեցող իրադարձութիւններին, կարողում է վերլուծում է ցանկացած տեղեկութիւն: Արցախում պատերազմի ընթացքում այդ ծրագիրը հերոսի հետ միասին հետեւում է տեղի



ունեցող իրադարձութիւններին եւ ընդհանրացնում ու փոխանցում է տեղեկատուութիւն՝ հնարաւորինս անաչառ, առանց քաղաքական կամ ժամանակի թելադրանքի:

Ես արհեստական բանականութեան այս ծրագիրը օգտագործում եմ որպէս ժապաւենի պատմողական գործիք՝ պատմելու իրական դէպքերի մասին, որոնք անարդար են աշխարհի բոլոր՝ թե՛ գրուած, թե՛ չգրուած օրէնքների ստեանկիւնից: Ինձ համար կարեւոր էր ցոյց տալ, թէ ինչպէ՞ս կարող է արհեստագիտութիւնը, որը ստեղծուել է տեղեկատուութիւն հաւաքելու եւ վերլուծելու համար, նաեւ դառնալ ճշմարտութիւնը փոխանցելու միջոց:

«Ա.».- Ժապաւենը անգլերենով է, անոր մէջ ներգրաւուած են օտարներ, նաեւ անիկա հասցեագրուած է օտար ակնդիրներուն ալ: Անիկա ինքնին կարելու է Ղատ մը օտարներուն ուշադրութեան յանձնելու: Ի՞նչ առաքելութիւն կը կատարէ այս ժապաւենը այս առումով:

Ջ. Ա.- Այո՛ր, ինձ համար սա շատ կարեւոր է: Ես ուզում եմ, որ իմ ժապաւենները հասնեն հնարաւորինս լայն լսարանի, եւ լսող-կապէս՝ այն մարդկանց, որոնք զուցէ առաջին անգամ են առեւտուում Արցախի պատմութեանն ու այնտեղ տեղի ունեցած իրադարձութիւններին:

Անգլերէն լեզուն եւ միջազգային դերասանական կազմը հենց այդ նպատակին են ծառայում: Ես չեմ ուզում, որ Արցախի մասին պատմութիւնները մնան միայն հայ հանդիսատեսի շրջանակում: Ուզում եմ դրանք պատմել աշխարհին՝ այնպիսի լեզուով եւ ձեւով, որ օտար հանդիսատեսը կարողանայ ընկալել, գգալ եւ հասկանալ այն, ինչ մենք ապրել ենք:

«Վերածնունաճը» ինձ համար վկայութիւն է իրական մարդկանց եւ իրական իրադարձութիւնների մասին: Իմ առաքելու-



թիւնն է այդ պատմութիւնները հնարաւորինս լայն տարածել եւ թոյլ չտալ, որ դրանք մոռացուեն կամ աղաւաղուեն: Եթէ ժապաւենը կարողանայ թելուզ մէկ մարդու ստիպել հարցեր տալ, հետաքրքրուել եւ փորձել հասկանալ, թէ իրականում ի՞նչ է տեղի ունեցել, ես կը համարեմ, որ այն իր առաքելութեան մի մասը կատարել է:

«Ա.».- Վերջին տարիներուն աշխարհը եռաց ու տակաւին կը շարունակէ եռալ պատերազմներով, հակամարտութիւններով, զոհեր, վիրաւորներ, անտունիներ, անարդարութիւն ու անմարդկայնութիւն: Արցախի պատերազմն ու կորուստն ալ այդ արհաւիրքներուն գլխաւորն է մեզի համար: Ժապաւենին մէջ այս երեւոյթը կայ, խօսի՞նք այդ մասին:

Հարցազրոյցը վարեց՝
ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՓՈՔԵՄՈՆԸ 30 ՏԱՐԵԿԱՆ Է

Գրեթե բոլորին ծանոթ Փոքեմոնը 2026-ին կը տօնէ իր 30-րդ տարեդարձը: Այս առիթով ճափոնի մէջ շուկայ պիտի իջնեն կերպարներու քարտերու նոր հաւաքածոյ մը՝ մեծ ուրախութիւն պատճառելով այս խաղի սիրահարներուն: Սակայն ինչպէ՞ս ծնած են այս խաղին հերոսները՝ Փիքաչու, Չարմանտըր, Սքըրըըլ, Պալպատոր եւ ուրիշ կերպարներ:

Փոքեմոնի պատմութիւնը կը սկսի 1996-ին: 27 փետրուարին նոր վիտէօ-խաղ



վերածուի: Ան մեծ յաջողութիւն կը գտնէ: Ժամանակի ընթացքին Փոքեմոնի աշխարհը կը մեծնայ: Վիտէօ-խաղերուն եւ

նակներ, եւ արտադրուած՝ աւելի քան 75 միլիառ քարտեր: Անշուշտ պատմութիւնը հոս չի վերջանար: Այս ձեւով, այս գրպանի հրեշներուն 30-րդ տարեդարձը նշելու համար ճափոնի մէջ շուկայ իջաւ Փոքեմոնի քարտերու նոր տրցակ մը:

ԳԻՏԵԻՐ, ԹԵ...

Փոքեմոնի աշխարհը յղացող Սաթշի Թաժիրին Է: Փոքրիկ տարիքին ան 2 նախասիրած ժամանց ուներ. միջատներու հաւաքածոները եւ արքետ վիտէօ-խաղերը: Այս մթնոլորտին մէջ Է, որ ան յղացած է տարբեր տեսակի միջատներու հաւաքածոյի մը վրայ հիմնուած վիտէօ-խաղ մը:

Եւ այս ձեւով կը ծնի Փոքեմոնը:

Սակայն ինչպէ՞ս կարելի է, որ կղզի մը կարենայ տեղափոխուիլ: Պարզապէս որովհետեւ ան իսկական ժայռային կղզի մը չէ: Ան ափերէն լիճին մէջ ինկած ճիւղերու, հողի եւ բուսականութեան կոյտ մըն է: Նման բնական կազմաւորումներ ծանօթ են, սակայն անոնց թիւը շատ քիչ է: Մասնագետները տակաւին չեն գիտեր, թէ այս կոյտը ինչպէ՞ս կազմուած է: Հետեւաբար անոնց զայն մօտ օրէն պիտի ուսումնասիրեն:



մը կը յայտնուի ճափոնի մէջ՝ «Նիւթենտօ կէյմ պոյ»-ի գործիքին յատուկ: Անոր անունը «Փոքեմոն» Է. «**Փոքեթ մոնսթըր**» («գրպանի հրեշ») կրճատումը: Սկզբնական շրջանին

պատկերասփիւռի յայտագիրներուն կողքին կը յայտնուին քարտերու խաղեր, **սմարթֆոնի** վրայ **ափլիքէյշըններ**, «Փոքեմոն կօ» խաղը, եւ նոյնիսկ՝ շարժապատ-



գոյութիւն ունէին 151 կերպարներ: Խաղին նպատակն էր ամենէն մեծ թիւով փոքեմոններ բռնել եւ դառնալ ամենէն լաւ մարզիչը: Ասոր հա-

կերներ: Ասոր կողքին, փոքեմոններու թիւն ալ կը բարձրանայ: Այժմ կարելի է հաշուել աւելի քան 1000 կերպար:



մար պէտք էր խաղերու մասնակցիլ եւ յաղթել: Յաղթանակները կարելիութիւնը կու տային փոքեմոններուն՝ յառաջդիմելու եւ միշտ աւելի հզօր դառնալու:

Շատ շուտ վիտէօ-խաղը պատկերասփիւռի յատուկ անիմէյթտ յայտագիրի մը կը

իր յայտնաբերումէն 30 տարիներ ետք Փոքեմոնը կը մնայ ամենէն շատ ժողովրդականութիւն ունեցող եւ ամենէն շատ ծախուած խաղերէն մէկը: Վիտէօ-խաղերէն ծախուած էր աւելի քան 489 միլիոն օրի-

ԱՐՏԱՍՈՎՈՐ

ԼԻՃԻ ՄԸ ՄԵՋ ԳՏՆՈՒՈՂ ԿՂԶԻՆ ԿԸ ՏԵՂԱՓՈԽՈՒԻ



Զանաւայի արեւմուտքը Ուիլիսթըր ջրամբարը կը կազմէ գեղարուեստական լիճ մը: Յուլիս ամսուն շրջանի բնակիչներէն մէկը հոն կը նշմարէ կղզիի մը գոյութիւնը: Շնորհիւ արբանեակներու նկարներուն՝ անոր գոյութիւնը լիճին կեդրոնը կը փաստուի: Օգոստոսի սկիզբը ան կ'անհետանայ... Ապա, 15 օգոստոսին ան դարձեալ կը յայտնուի ափի մը մօտը, 30 քմ աւելի հեռու: Ան այլեւս չի շարժիր:

Սակայն ինչպէ՞ս կարելի է, որ կղզի մը կարենայ տեղափոխուիլ: Պարզապէս որովհետեւ ան իսկական ժայռային կղզի մը չէ: Ան ափերէն լիճին մէջ ինկած ճիւղերու, հողի եւ բուսականութեան կոյտ մըն է: Նման բնական կազմաւորումներ ծանօթ են, սակայն անոնց թիւը շատ քիչ է: Մասնագետները տակաւին չեն գիտեր, թէ այս կոյտը ինչպէ՞ս կազմուած է: Հետեւաբար անոնց զայն մօտ օրէն պիտի ուսումնասիրեն:

ԱՇԽԱՐՀԻ ԶԱՐՏԵՍԸ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ



Գիտէի՞ր, թէ 4 սեպտեմբերին 164 երկիրներու պետքը «Այո» ըսին՝ փոխելու աշխարհի քարտէսը իրենց վաւերաթուղթերուն մէջ: Սակայն ի՞նչ կը նշանակէ այս փոփոխութիւնը:

Մեր բոլորին ծանօթ աշխարհի քարտէսը գծուած է 450 տարիներ առաջ գիտնական Մերգաթօրին կողմէ: Այդ ժամանակ այս քարտէսին գործածութիւնը դիւրին էր նա-

ւարկութեան համար: Սակայն ան ճշգրիտ չէ. ան չի յարգեր ցամաքամասերուն համեմատութիւնները: Կարծեք Եւրոպան աշխարհի կեդրոնն է: Հիւսիսային Ամերիկան շատ աւելի մեծ է, քան՝ Հարաւային Ամերիկան: Կրիկանտը Ափրիկէին մեծութիւնը ունի, մինչ ան Ափրիկէն 14 անգամ աւելի փոքր է...

Աշխարհի նոր քարտէսը աւելի արդար է


ճշգրիտ է, որովհետեւ ցամաքամասերուն չափերը իրարու համեմատած՝ իրականութեան աւելի մօտ են: Սակայն հակառակ ասոր ալ պէտք է մեր միտքերուն մէջ պահենք, որ բոլոր քարտէսները ամբողջովին ճշգրիտ չեն կրնար ըլլալ, որովհետեւ տափակ մակերեսի մը վրայ դժուար է ամբողջովին ճիշդ գծել երկրագունդը, որ կլոր է:



ԺԱՄԱՆՅ



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 14 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած առարկաները:

4	3	5	7	8	2	7	2	8	6	1
5	7	0	8	5	1	4	7	3	9	1
6	5	6	6	6	8	5	3	2	1	4
9	3	0	1	6	5	8	4	4	7	7
2	1	7	6	3	8	5	0	7	9	3
8	2	9	2	2	4	9	6	8	5	5
0	5	9	3	3	3	8	5	6	4	2
7	8	1	7	7	9	6	5	5	7	0
0	4	3	6	0	9	6	2	3	5	6
8	4	3	6	1	5	9	2	3	4	5
5	3	0	9	4	3	2	6	8	2	3
94229	55667	35656								
33199	32632	68906								
56632	23490	50623								
74485	97196	59234								
29654	85691	27340								
82728	28070	48521								
66853	56025	50607								

Կրնա՞ս գտնել տախտակին մէջ պահուած թիւերը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՂԵՂՆԱԲԱՌ - 261

Արմիրտովաթի փոփոխությունները	Վեդեցիկի ըմբռում	Հող փորելու գործիք	Շիշ գոցելու գլանիկ	Թափանցիկ դեղին մարմար Եզրուկական Միություն	Տիրան Չորացեան
Անտրեյնի մշտնջենական	Լիստ		Թուր, խաղ		
Դատառու-նագիրքի Միությունը		Արտոնութիւն			
Ձուկի մաշկ		Խաղաղիք տիկնիկ			
		3-րդ դեմք		Անճայնատը՝ որմ	
		Հակ.՝ քնտանի կենդանի		Հեծեճանց, հասցանց	
Դիմացկուն, ամրակուռ				Շիկոպեան հիմքը	
Հակ.՝ գեշ, ցար					
		Հակ.՝ շաղկապ		Երուսաղեմի յայտնի մզկիթ	
		Յխուս գինը ողջկուռ			
Աշխարհի ամենատաք անապատը	Եգիպտոսի քրիստոնեայ Մեկ բաժին, կտոր			Մարմնի ստորին անդամ	Ուս բազալորա-կան
				Անհաշտ թշնամի	
				Համեմային բոյս, խազուր	
Փխրուն, Լուրջ, զգայուն				Հակ.՝ ցանի ճիչ	
Չեղի հարուած				Տառի անուն	
			Օփերայի արական ձայն		
			Լորաշխարհի գրեթե		
Վերի, հպարտակ	Դաղենտիկի վարցական կերտն				Ձախ կողմ
				Ուղղով հարուած	
Դրան մուտք, սեմ	Ցուցական		Երաժշտա-կան գործիքի ճափոնական մակնիշ	Տուրի տղեխը	
	Դրախտ, աղին			Անվիշը՝ տղամարդու պատկանող	
		Սատուկի քերուցուռ		Սատուած, որ Էւ	
Բոժոժաւոր ծնծղայ				Ցոցնակերտ մասնիկ	
Դերձան, աստան			Լուսաւորիչի հայրը		Կրկնուած բաղձնայի-ներ
		Մետրոպ Մաշտոցի ծննդավայր գիւղ	Աղամանդի ցար		
Կեանքի վախճան			Հոնկե սկսուս Բազրատ սրբազանի շարժումը		

Պատրաստեց՝ Լանոթ Գոչունեան-Թաշճեան

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՌ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԳՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Լախատես - Այբուբենին:
2. Թեթի, պակասաւոր - Դագար:
3. Եգիպտահաւ - Արիմալից բորբոքուն պալար:
4. Իրանեան լրատու գործակալութիւն - Կենսահիթ:
5. Աւելցու թուի:
6. Գրաբար՝ հո՛ւս - Մեծ մայր - Հրաւեր:
7. Սպանիոյ պատմական մարզերէն - Հասակ:
8. Ուշանալ - Լոյն գիրերը:
9. Աղամանդ - Ձայնակիշ - Անբարեացական (խակ.):
10. Արական անուն - Արաբական թերակրօղի:
11. Շաղճ՝ Լիբանանի օգափոխութեան վայրերէն:

ՈՐԴԱՊԱՏՅԱՆ

1. Անասունի մորթ - Ակարտելի:
2. Անամօթ - Հինգած ալիւրի մանր որդ:
3. Ամբողջական հաց - Յանձնեմ - Դրկից գիրեր:
4. Մամաց - Չօրաբաբէլի որդին:
5. Աճականակերտ մասնիկ - Տարեգլուխ:
6. Հաշուական:
7. Կուրիս, շատակեր:
8. Ֆրանսական քաղաք - Ռուսական Լախիկին անցրպետական:
9. Օձաղանակ - Եմիլ Չոլայի երկերէն:
10. Յուրտ կամ անտարբեր - Կոռուս:
11. Յամառ չորքոտանի - Ո՛չ մէկ բան:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ԱՂԵՂՆԱԲԱՌ ԹԻՒ 260-Ի ԼՈՒԾՈՒՄ

Հայրը՝ հայ թշնամի	Մ	Սպաս՝ Շատեր	Մ	Հիացմունքով գլան	2	Սարսուր, վայր	Ս	Դասի Լատարայր	Վ	Բանտի Դատարար-տան Գրանագի Լախագան
Խերանանի տիկարներէն	Ն	Ո	Ն	Տ	Մ	Ի	Հ	Ր	Ա	Ն
Գիտալ, տեղեկանալ	Ի	Մ	Ա	Ն	Ա	Լ		Տարից Թախտում	Տ	Ի
Հայ գտան	Ա	Թ	Ա	Հակ.՝ հանդիպում	Տ	Տ	Ա	Հին բատուան-ներ	Հ	Ե
Հակ.՝ լուսնի հողմ, գլխունի	Ա	Ն	Ի	Ո	Լ	Հակ.՝ խառով տոյնով վե գանկել	Լ	Ե	Կ	Ո
Գոգոսի, բարկամայ	Կ	Ր	Զ	Ո	Տ	Ի	Լ	Ժամանել Կառի գործիք	Գ	Ա
Կառք բաժան թաղի	Հ		Մարդու իրական սեւ	Կ	Ի	Ն	Ուստատիկ գետերէն	Լ	Ե	Ա
			Բաղդաճաւ տարկալ				Շատ Դասած, խոնմ մարդ			
Լ	Ե	Շ	Կ	Շիտական Լախաճանց	Վերին, անէի բարձր	2	Գ	Ե	Ր	Ցուցական
Կրկնուած բաղձնայի	Ր	Ր	ԱՄ, Լախանց	Ա	Ր	Ի	2	Ո	Ն	Ա
Արի	Զ	Ա	Ձ	Կատեցուղ պատ, բումբ	Պ	Ա	Տ	Ո	Ի	Ր
				Եղային կենդանի						
Չոր թուի	Տ	Ա	Խ	Ոսկ, բերան թղեղ	Խ	Ո	Ի	Մ	Ինչ ցափ	Զ
Կատուցել										
Շ	Ի	Ն	Ե	Լ		Ի	Անբնակ, անապատ	Կրկնուած ձայնաւոր	Ո	Ո
								Գոգոլիկ ունին		
Դեմիկ յատաշարման	Անի, տեսանկիւ	Ա	Չ	Հակ.՝ կարտիկ վիճակ	Զ	Ն	Ա	Կ	Ր	2
	Հանքահիւ, սրտիկ			Երկնիշ թիւ						
Ճ	Ա	Կ	Ա	Տ			Եղ ոչխար	Մ	Ա	Զ
							Չէշ, սարդ			Ի
Օրիկ ուղեկից վարարպետ	Ղ	Թմանեանի երկերէն	Փ	Ա	Ր	Վ	Ա	Ն	Ա	24 ժամ, տիւ
		Ցուցական								
Մ	Ի	Ն	Ա	Ս	Ցուի ճիչ	Ա	Տ	Անգլիական մեքենա	Ն	Օ
Մշոյ ձեռագործու հասցանով	Ճ	Ա	Ո	Ը	Ն	Տ	Ի	Ր		Ր

«ԱՅՍ ԺԱՊԱՒԵՆԻՆ ՄԵՉ ԴՐԵԼ...»

Շարունակուած 3-րդ էջէն

Ջ. Ա.- Ցաւօք, այսօր աշխարհում պատերազմը կարծես դարձել է մեր առօրեայի մի մասը։ Տարբեր երկրներում մարդիկ շարունակում են կորցնել իրենց տները, հարազատներին, իրենց անվտանգությունն ու ապագայի նկատմամբ հաւատը։ Արցախի պատերազմն ու մեր ժողովրդի կրած կորուստը, բնականաբար, ինձ համար առանձնաշատուկ եւ անձնական նշանակութիւն ունեն, որովհետեւ ես այդ ամենի ականատեսն ու իմ մաշկի վրայ գգում եմ պատերազմի աւերիչ հետեւանքներն։

«Վերածնունդը» հենց այդ ցաւից է ծնունդ առնւոյ, բայց ես չեմ ցանկացել պատմել միայն Արցախի մասին։ Ժապաւենի միջոցով փորձել եմ խօսել պատերազմի աւերի լայն մարդկային հետեւանքների մասին՝ այն մասին, թէ ի՞նչ է տեղի ունենում մարդու ներսում, երբ նա կորցնում է իր տունը, իր անցեալը, իր հարազատներին եւ ստիպուած է ապրել մի իրականութեան մէջ, որտեղ արդարութիւնն ու մարդկային կեանքը յաճախ երկրորդ գիծ են մղուում։

Ես չեմ ուզում պարզապէս պատմել պատերազմի մասին։ Ուզում եմ, որ մենք հարց տանք՝ ինչո՞ւ է մարդը շարունակում պատերազմել, ինչո՞ւ ենք թոյլ տալիս, որ նման ողբերգութիւնները կրկնուեն եւ, ի վերջոյ, ինչպե՞ս կարող ենք պահպանել մարդկայնութիւնը անմարդկային իրավիճակներում։

«Ա.»- Երբ Հայաստանի իշխանութիւնները այսօր կը խօսին Արցախի հարցի փակուած ըլլալուն եւ արցախահայութեան իրենց բնօրրանը վերադարձի անկարելիութեան մասին, դուք համարձակօրէն եւ հաստատական կը ցուցադրէք ժապաւեն մը, որուն մէջ կայ յոյսը, կայ «Վերածնունդը»։

Ջ. Ա.- Ես հաւատում եմ, որ պատմութիւնը չի աւարտում այնտեղ, որտեղ ինչ-որ մէկը յայտարարում է, որ այն անարտուած է։ «Վերածնունդը» հենց այդ հաւատքի մասին է։

Ինձ համար Արցախը փակուած հարց չէ, որովհետեւ Արցախը միայն տարածք չէ։ Արցախը մեր ժողովրդի յիշողութիւնն է, մեր տունը, մեր մշակոյթը, մեր պատմութիւնը, մեր ինքնութիւնը։ Ես քանի դեռ այդ ամենը կենդանի է մեր մէջ, ես չեմ կարող ընդունել, որ պատմութիւնը փակուած է։

Այո՛, այսօր շատ դժուար է խօսել վերադարձի մասին, յատկապէս՝ այցքան մեծ կորուստներից յետոյ։ Բայց ես չեմ ուզում իմ ժապաւեններով խօսել միայն այն մասին, ինչ հնարաւոր է այսօր։ Շարժապատկերը նաեւ ապագայի մասին խօսելու հնարաւորութիւն է։ «Վերածնունդը» այդ առումով յոյսի ժապաւեն է։

Ես հաւատում եմ, որ մի օր հայը կըրկին կը վերադառնայ Արցախ։ Չգիտեմ՝

այդ օրը ե՞րբ կը լինի, եւ ինչպիսի՞ն կը լինի այդ վերադարձը, բայց ես չեմ ուզում հրաժարուել այդ յոյսից։ Եւ կարծում եմ՝ արուեստագետի իմ պարտքն է այսօր պահպանել այդ հաւատը, պատմել ճշմարտութիւնը եւ չորոնել, որ Արցախի պատմութիւնը մոռացուի։

«Ա.»- Տարբեր առիթներու յայտարարած էք՝ «Ես կ'ապրիմ Արցախով, կը պայքարիմ յանուն Արցախի», իսկ այս մէկը լոկ խօսք չէ, այլ ասիկա կը կատարէք նաեւ գործով։ Այսօր, երբ Արցախը կորսնցուցած ենք, պիտի շարունակէ՞ք պայքարիլ նոյն հաւատքով եւ նոյն նպատակով։

Ջ. Ա.- Այո՛, եւ վստահ եմ՝ պիտի շարունակեմ։ Եթէ ես ատում եմ՝ «Ապրում եմ Արցախով, պայքարում եմ յանուն Արցախի», դա ինձ համար երբեք պարզապէս խօսք չի եղել։ Դա իմ կեանքի ընտրութիւնն է, իմ ապրած ճանապարհը եւ իմ ստեղծագործութեան հիմքը։ Ու դա անկեղծ է։ Դա այն է, ինչ ես գգում եմ։ Դա իմ կեանքն առաւել իմաստաւորում է, եւ ինձ համար պատիւ է նման կեանքով ապրել։

Այսօր, երբ Արցախը կորցրել ենք, պայքարը գուցէ աւելի դժուար է դարձել, բայց՝ ոչ պակաս կարեւոր։ Ընդհակառակը, այսօր մենք աւելի մեծ պատասխանատուութիւն ունենք՝ պահպանելու Արցախի յիշողութիւնը, պատմութիւնը, մշակոյթը եւ այնտեղ ապրած մարդկանց պատմութիւնները։

Իմ գէնը շարժապատկերն է։ Ես չեմ կարող քաղաքական որոշումներ կայացնել, բայց կարող եմ պատմել, փաստագրել, վկայել եւ այդ պատմութիւնները հասցնել աշխարհին։ Ես պարզապէս չեմ կարող ապրել՝ այդ ամենը մի կողմ դնելով։

«Ա.»- Երանելի եւ ամերիկացիներն ու ամերիկահայերը, որոնք ժապաւենդ դիտելու առիթ պիտի ունենան, իսկ աշխարհի միւս երկիրներու մէջ անոր ցուցադրութեան պատկերացում մը ունի՞ք։

Ջ. Ա.- Ի հարկէ, մեծ ցանկութիւն եւ նպատակ ունեմ, որ «Վերածնունդը» ցուցադրուի աշխարհի տարբեր երկրներում։ Ամերիկայում առաջիկայ ցուցադրութիւնները մեզ համար կարեւոր առաջին քայլ են, բայց ես ուզում եմ, որ ժապաւենը ճանապարհ անցնի նաեւ Եւրոպայում եւ աշխարհի այլ երկրներում։

Ինձ համար յատկապէս կարեւոր է, որ այն հասնի օտար հանդիսատեսին՝ մարդկանց, որոնք քիչ բան գիտեն Արցախի եւ այնտեղ տեղի ունեցածի մասին։ Շարժապատկերի միջոցով ուզում եմ պատմել, վկայել եւ մեր իրականութիւնը հասցնել աշխարհին։

Յոյսով եմ՝ «Վերածնունդը» դեռ երկար ճանապարհ կ'ունենայ անցնելու եւ կը հասնի հնարաւորինս լայն լսարանին։

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ ՊԵՅՐՈՒԹ ՅԱՂԹԵՅ ԵՒ ԲԱՐՁՐԱՅԱԲ Գ. ԴԱՍԱԿԱՐԳ

Երեկ յետմիջօրեին, Սաֆայի դաշտին վրայ, ՀՄԸՄ ՊԵՐՈՒԹ ՖԻՆԱՆՍԻՆ ԽՈՒՄԵՐ ԿԱՐԳԻՆԵՐՈՒՆ ԻՄԵԾ ՄԱՍԵՐ ԿԱՆԻ ԻՐ ՎԵՐԵՅԻՆ ՄՐԵՐՈՒՄԻՆ, ԿՐԵԱ 1-0 ԱՐՈՂԻՆԵՐՈՎ ԵՐԱՅԵԼ ՀԱՅԱԿԱՍ ՍԱԶԵՖԻ ԶԵՐԻՒՆ ԵՒ ԲԱՐԺՐԱՆԱԼ Գ. ԴԱՍԱԿԱՐԳ:

Բնականաբար մրցումը բաւական պրկուած էր, մանաւանդ որ ՀՄԸՄ-ի մարզիկներուն մեծ մասը անփորձ էին, մինչ փորձառու մարզիկներէն Հայասմ Մոքտատ, որ մրցումին միակ կողը նշանակեց, վիրաւորելով լեցե դաշտը կիսախաղէն քիչ մը առաջ:

Մրցումին միակ կողը նշանակուեցաւ 26-րդ վայրկեանին, երբ Մոքտատ ազատ հարուածով շատ գեղեցիկ կող մը նշանակեց:

Պէտք է ընդունիլ, որ մրցումը այդքան ալ բարձր մակարդակի չէր, ինչպէս նշեցինք՝ փորձառութեան եւ ճնշումին պատճառով: Կարեւորագոյն բանը արդիւնքն էր, եւ այդ մէկն ալ եղաւ 90 դժուար վայրկեաններէ ետք:

ՀՄԸՄ-ին միացաւ Ղատիր Հարիս, որ իր կարգին 12 կէտեր հաւաքեց՝ ՀՄԸՄ-էն ետ մնալով կոլերու տարբերութիւնով, մինչ Արապի Աքքար 10 կէտերով



մնաց Դ. Դասակարգին մէջ: Օր մը առաջ Ա. Խմբակէն իրենց Գ. դասակարգի տոմսերը շահած էին Հապապ Պըրժ Եւ Ռայյան Սարֆանտ:

Յոյսով, որ յառաջիկայ տարեշրջանէն առաջ այս անփորձ տղաքը լաւ ձեւով կը պատրաստուին եւ խմբային խաղով կը պայքարին Գ. դասակարգին մէջ:

ԱԶԳԵՐՈՒ ԼԻԿԱ

- ՆԵՏԵՐԼԱՆՏՆԵՐ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՐԱՍԱՐԵՑԱՆ - ՀԱՎԱՆՏ 2 ԿՈՒԵՐ ՆՇԱՆԱԿԵՑ

Հինգշաբթի գիշեր սկսան «Եւ. Է. Էֆ. Ա.»-ի կազմակերպած Ազգերու լիկայի 2026-2027 տարեշրջանի մրցումները:

Բոլորին ուշադրութիւնը կեդրոնացած էր Ամսթերտամ, ուր Նետերլանտներ կը հիւրընկալէր Գերմանիան, «Եոհան Զրոյֆ»-ի անուան մարզադաշտին վրայ:

Երկու հաւաքականներն ալ նոր մարզիչներով «օժտուած» էին, ուր սպանացի պատմական միջնապահ Զաւի Հեռնանտես կը գլխաւորէր Նետերլանտները, իսկ Եուրկեն Զլոփ՝ Գերմանիան:

Մրցումը բաւական յարձակողական եղաւ երկու խումբերէն. Գերմանիա առաջին կիսախաղին աւելի վտանգաւոր էր, բայց Բ. կիսախաղին Նետերլանտներ գրեթէ իրենք ստեղծեցին եւ ճնշեցին մինչեւ հաւասարութեան կողը՝ 92-րդ վայրկեանին:

Նետերլանտներ 12-րդ վայրկեանէն իսկ կող մը կրցան նշանակել շնորհիւ Լիվըրփուլի յետսապահ Վիրճել Վան Տայքի, որ սակայն չվաւերացուեցաւ ՎԱՐ-ին կողմէ, մանաւանդ որ «նարնչագոյն» մարզիկ մը ուշացուցած էր գերմանացի բերդապահ Թեր Շթեկենը:

32-րդ վայրկեանին Գերմանիա կազմակերպեց



գեղեցիկ փոխանցումներով յարձակում մը, որուն աւարտին Տորթուստի միջնապահ Ֆելիքս Նմէչա նշանակեց կող մը: Նետերլանտցի մարզիկները բոլորեցին, մանաւանդ որ յարձակումի պահուն, Սանտըրլեստի յառաջապահ Պրայնը Պրոպի վիրաւորուած էր, բայց յարձակումը շարունակուած... Ամէն պարագայի, պէտք է նշել, որ Պրոպիէն առաջ Զայ Հաւերց իր կարգին վիրաւորուած եւ փոխարինուած էր:

Բ. կիսախաղին, ինչպէս ըսինք, մրցումը գրեթէ միակողմանի էր, ուր Զաւիի գլխաւորած խումբը ամբողջովին տիրապետեց: Կը կարծուէր, թէ մրցումը պիտի աւարտի 0-1 արդիւնքով, բայց Նետերլանտ-



ներ 92-րդ վայրկեանին արագ հակայարձակումով մը նշանակեցին իրենց հաւասարութեան կողը՝ Ռուպեն Վան Պոմելի փոխանցումէն ետք:

22 տարեկան Ռուպեն Խոր՝ Մարքի նման աշխուժ միջնապահ մըն է, որ սակայն կը գործէ աւելի ձախ կողմի վրայ, եւ իր դաշտ Ներկայացած 10 վայրկեաններուն բաւական վտանգեց Գերմանիոյ բերդը:

Անոր փոխանցումը շատ կարեւոր էր Կաքիոյի համար, որ նշանակեց 1-1-ի կողը:

Մրցումի աւարտին, Գերմանիոյ մարզիչը շնորհաւորեց իր մարզիկները եւ մրցակից խումբի, մասնաւորապէս Լիվըրփուլի մարզիկները (ուր կը մարգէր Նախապէս)՝ Կաքիոն եւ Կրավէնպերիւք:

Նոյն խմբակէն Յունաստան 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սերպիան՝ այս վերջինիս դաշտին վրայ: Անասթասիոս Տուվիքաս 95-րդ վայրկեանին 3 կէտերը նուիրեց Յունաստանի, որ 1-0 արդիւնքով կը պարտուէր: Նորվեկիա բաւական հետաքրքրական մրցումէ մը ետք 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Դանիան՝ «Սքանտինաւիան տերպի»-ին:

Մանչեսթըր Սիթիի յառաջապահ Երլինկ Հաալանտ 2 կող նշանակեց ի նպաստ Նորվեկիոյ:

Հայասնտ (26 տարեկան) ազգային խումբին հետ այժմ 64 կոլեր ունեցաւ 56 մրցումներու ընթացքին՝ գերազանցելով Չլաթան Իպրահիմովիչի եւ պրագիւցի Ռոնալտոյի ցուցանիշները: 62-ական կոլեր նշանակած էին Իպրահիմովիչ եւ Ռոնալտո՝ իրենց ամբողջ ասպարէզին ընթացքին (սազային խումբին հետ):

Նոյն խմբակէն Փորթու-

գալ 1-0 արդիւնքով յաղթեց Կալէսին՝ շնորհիւ ժոռա Ֆելիքսի կոլին:

ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՅԱԶՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿԵՆ ԻՐԵՆՑ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Ճատրակի 46-րդ Օլիմպիատայի մրցումները կը շարունակուին Ուզպէքիստանի Սամարշանտ քաղաքին մէջ:

8-րդ հանգրուանի մրցումներուն, տղոց հաւաքականը 2-2 արդիւնքով հաւասարութիւն պարտադրեց Նետերլանտներու հաւաքականին:

Շանթ Սարգսեան սեւ խաղաքարերով կրցաւ յաղթել իրմէ աւելի լաւ դասուած Լիւք Վան Վելիին:

Հայկ Մարտիրոսեան հաւասարութիւն արձանագրեց Անիշ Կիրիի հետ, մինչ Մանուէլ Պետրոսեան հաւասարութիւն արձանագրեց Երուի Լամի հետ: Ռոպէրթ Յովհաննիսեան պարտութիւն կրեց Եորտըն Վան Ֆոլթսթէն: Պէտք է ըսել, որ Նետերլանտներու բոլոր ներկայացուցիչներն ալ աւելի բարձր դասուած էին մեր հաւաքականէն, որ խմբային դասաւորումին մէջ 10-րդ



դասուած է, մինչ մրցակից Նետերլանտներ՝ 6-րդ: Թիւ 1 դասուած Միացեալ Նահանգներ, որուն մաս կը կազմէ Լեւոն Արոնեան, 3,5-0,5 արդիւնքով պարտութեան մատնեց Սերպիան:

Հայաստանի տղոց հաւաքականը 13 կէտեր ունի կարելի 6 կէտերէն եւ միայն 1 կէտով ետ կը մնայ Ուզպէքիստանէն եւ Գերմանիայէն:

Չնչին տարբերութեամբ, Չինաստան, Նետերլանտներ, Ազրպէյճան, Միացեալ Նահանգներ, Յնդկաստան

ՖՐԱՆՍԱԿԱՆՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱՂԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ՝

600 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՅԵԼՈՒ «ՀՐԱԶՂԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԸ

Հայաստանի կառավարութիւնը հաւանութիւն տուած է 600 միլիոն դրամ յատկացնել «Հրազդան» մարզադաշտի վազքուղիի եւ անհրաժեշտ ենթակառուցութեան վերակառուցման համար: Մարզադաշտը կը պատրաստուի հիւրընկալելու Ֆրանսա-խօս երկիրներու խաղերը, որոնք տեղի պիտի ունենան Հայաստանի մէջ 23 յուլիսէն 1 օգոստոս 2027-ին:

Աշխատանքներու պայմանագիրը հրատապ ընթացքով կը կնքուի «Ճի. Թի. Ես. Զոնսթրաքշըն» ընկերութեան հետ: Սակայն վազքուղիի ռետինէ ծածկուած բաժինը եւ հիմքի Նախապատրաստութիւնը հաստատուած զումարին մէջ Ներառուած չեն: Այդ աշխատանքներուն համար առանձին ներդրում պէտք է իրականացուի:

Թեքնիք հետազօտութեան արդիւնքներու համաձայն, խաղերուն ժամանակ մարզադաշտը կրնայ ընդունիլ մօտ 21,566 հանդիսատես, սակայն թրիպիները կը գործեն սամանափակումներով: Հիւսիսային եւ հարաւային թրիպիները 50 տոկոսով պիտի օգտագործուին, արեւմտեանը՝ ամբողջութեամբ: Արեւելեան թրիպիներն պարագային կարելի պիտի ըլլայ օգտագործել միայն առաջին 11 շաբաթերը: Վերի բաժինները պիտի մնան փակ: «Հրազդան»-ը կառավարութեան կը



պատկանի, եւ այդ պատճառով կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան Նախարարութեան յանձնարարուած է երեք ամսուան ընթացքին մշակել յառաջիկայ 20 տարիներուն մարզադաշտը պետական ծրագիրներու շրջանակով օգտագործելու պայմանները:

Բացի Ֆրանսախօս երկիրներու խաղերէն, այստեղ կը Նախատեսուի կատարել Հայաստանի ախոյեանութիւնները, միջազգային մրցումներ եւ աթլետիկ մարզումներ: Նշենք, որ «Հրազդան» մարզադաշտը կառուցւած էր 1970-ին եւ հիւրընկալած է Արարատ Երեւանի խաղերը 1971-էն մինչեւ 2015, Փիւնիկի խաղերը 1992-էն 1998 եւ Հայաստանի ազգային խումբին խաղերը 1992-էն 1999:

19 մայիս 1971-ին 78 հազար համակիրներ ընդունած է այս պատմական մարզադաշտը, Արարատ-Կայրաթ Ալմաթի (3-0) մրցումին:

ՊԱՍԵՐԹՊՈԼ

ԵՈՒՐԱ ՄԵԼԻՔԵԱՆ ՄԻԱՑԱԲ «ՊՈԹԵՒ 2012»-Ի

Հայաստանի հաւաքականի պապեթպոլիստ Եուրա Մելիքեան միացաւ Պուլկարիոյ «Պոթեւ 2012» ակումբին: 2026-2027 տարեշրջանին Կրացա քաղաքի խումբը հանդէս կու գայ Պուլկարիոյ պապեթպոլի ազգային լիկային, իսկ իր դաշտին վրայի հանդիպումները պիտի կատարէ Պոթեւկրատի մէջ:

20 տարեկան պապեթպոլիստը արդէն մասնակցեցաւ իր նոր ակումբին բարեկամական մրցումին՝ Լեւոսքիի դէմ: Մելիքեան տապալ-տապալ իրագործեց 12 կէտ եւ 11 ռիպաուստ ձեռք ձգելով, սակայն Պոթեւ 94-106 արդիւնքով պարտուեցաւ:

Մելիքեան իր պատրաստութիւնները սկսած էր Պուլկարիոյ ախոյեան Պալլեան խումբին հետ: Ան նոյնիսկ բարեկամական մրցում ալ կատարած էր Արցիխի դէմ նշանակելով 13 կէտ եւ



13 ռիպաուստ: Ան նոյնիսկ տարեշրջանի մենարկէն առաջ Պալլեան ակումբին խմբային նկարին մէջ ալ ներկայ էր, սակայն վերջին վայրկեանին միացաւ Պոթեւին: Նախքան Պուլկարիա փոխադրուիլը, Մելիքեան Լաթվիոյ Լաթվիա Ունիվերսիտատէ խումբին եւ զուիցերիական Սթրալինկս Պազել խումբին հետ կը խաղար:

Ամրան ան մասնակցած էր «Էն. Պի. Էյ.»-ի «Ճի. Լիկ»-ին՝ Ռիօ Կրաստէ Վելի Վայփըզ խումբին հետ, բայց վերադարձած էր Եւրոպա:

«ԵՈՒ. ԷՖ. ՍԻ.»

ԾԱՌՈՒԿԵԱՆ. «ՅԱԶՈՐԴ ՄԵՆԱՄԱՐՏԸ ՏԻՏՐՈՍԻՆ ՀԱՄԱՐ Է»



«Եւ. Էֆ. Սի.»-ի թեթեւ կշիռի Բ. դասուած, Հայաստանը ներկայացնող Արման Ծառուկեան յայտարարեց, որ կը ծրագրէ 2027-ի սկիզբը մենամարտիլ իր կշիռի կարգի գործող ախոյեան ամերիկացի Ճասթըն Վեյճիի դէմ:

«Ղեկավարութիւնը (Եւ. Էֆ. Սի.)-ի գոհ էր իմ ելոյթէս, եւ ըսաւ, որ մենք կը խօսիմք յաջորդ շաբաթ: Յետոյ եւ հարցուցի, թէ արդեօք տիտղոսին համար մենամարտ կ'ունենա՞մ: Անոնք պատասխանը դրական էր: Իմ յաջորդ մենամարտս պէտք է տիտղոսին հա-

մար ըլլայ: Ես կը ցանկամ տիտղոսին համար պայքարիլ Վեյճիի դէմ: Յոյսով եմ, որ այդ մենամարտը տեղի կ'ունենայ յառաջիկայ տարուան սկիզբը», ըսաւ Ծառուկեան:

Նշենք, որ Ճառուկեան-Ռուֆի մրցումը տեղի ունեցած էր 20 սեպտեմբերի առաւօտեան, Լոս Անճելըսի «Քրիփ-թօ տորթ ըոմ» արենային մէջ: Հայ մարտիկը փայլուն յաղթանակ տարած էր առաջին ռաունտին աւարտէն 4 երկվայրկեան

